



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԱՆԳԱՐԱ-ԳՅՈՒԳԱՑԻՈՒԹԵՆ
ԴԵՎԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 16


Քաղաքական Լուսավորության
Դիմավոր Վարչության

№ 16

ԹԵՐԴՄԱՆԱԿԱՆ
(
ՊԱՏՐԱՀԱՅՑՔԵՐԸ)
ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

ԿՈՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե Կ Ե Վ Ա 6 1929



ԲԱՆԳԱ-ԳՅՈՒՂ. ԳԵՐԱՐՎԵՍՈԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

№ 16

Վ Ա Ր Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 16

ԹԱՐԴՄԱՆԵԿԱՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ՊՐԱԿ ՅԵՐԿՐՈՐԴ

A 8280



Հր. № 946. Գրաւենդվար № 1737 (ը). Տիբաժ 2000
ուշահրատի առաջին տպարան Վաղարշապատում
Գալվեր № 52

ՀԱՆՐԻ ԲԱՐԲՑՈՒՄ
(Ֆրանսիա)

ՉԱՐ ԱԶՔԸ

Գլուղի ծայրում կանգնել եր փոքրիկ խըր-
ճիթը, հարդով ծածկված, լերկու ներկված լու-
սամուտներով և ծռմոված դռնով. Նա հազիվ եր
նկատվում լերեկոյան աղջամուղջում, մեծ ճա-
նապարհի ֆոնի վրա, և անցորդները պետք ե
չուելին իրենց աչքերը, լարելին աեսողությունը,
վորագեսզի նկատելին լերեք փոքրիկ կերպարանք-
ները, վորոնք շարժվում ելին տան առջեի նըս-
տաբանի վրա: Այդ լերեք ստվերները, վորոնք
հազիվ ելին սպիտակին տալիս հեռվից, հետեւալ-
ներն ելին. չափազանց ծերմի մարդ, բոլորովին
փոքր մի լերեխա և նրա խաղատիկնիկը: Դա
այն ամբողջն եր, վոր և մնացել եր լերբեմնի
մեծ ընտանիքից, վորն ապրում եր ալդահղ, դաշ-
տերի և ուրիշ տնակների միջև: Բախտը հարմար
եր դտել կրծատել փոքրիկ ժան-ժանի հոր, մոր
և տատի կրտնքը, նրան թողնելով միան ծեր
սլաղիկին: Տղան աշխարհ լեկավ տիսուր, բոլո-

բովին վորբ։ Ծերուկի և յերեխալի ծնունդների
միջև նրանց մտերիմ ու հարազատ շատ կը ան-
քեր ելին մարել։ Բայց պապը բոլորովին ծեր եր,
իսկ տղան չափազանց փոքրիկ—այդ բոլորի մա-
սին մտածելու համար։ մեկն շտապում եր ամեն
ինչ մոռանալ, իսկ մյուսը գեռ չեր գիտակցում,
թե վորքան վշտալի ու թախծալի չե իր հարա-
զատներին կորցնելը։ Ծերը բոլորովին ընկել եր
մանկության գիրկը և ժան-ժանի հետ տիկնիկ
եր խաղում, ծիծաղում և զվարճանում եր ամ-
բողջ սրտով, վոչնչի մասին չմտածելով։

Այդ ժամանակ, նույն յերեկոյան, յերբ բո-
լոր ծանոթներն արդեն անցել ելին, յերկու տա-
րորինակ անձնավորություններ, լզար գեմքերով,
փայտուն աչքերով, յերեացին ճամբամիջին։ Նրանք
միանգանակ անհաճո ելին տեսողության համար,
շնորհիվ իրենց տգեղ, յերկար վերարկուների, և
հատկապես, շնորհիվ իրենց զզվելի, վանող մարմ-
նակագնի։ մասնավորապես տարորինակ եր այն,
վոր նրանցից մեկը լալիս եր։ Նրանք իրենց փալ-
լուն աչքերը հառեցին խրճիթի վրա, վորի պա-
տի մոտ գեռ ևս նստել և ուրախ ծիծաղում ելին
պապն ու թոռնիկը, իրենց լռակլաց տիկնիկի հետ։

Կասկածելի անցորդներն անընդհատ նայում
ելին, ապա խորհրդապավոր կերպով մատները տա-
նելով գեպի շրթունքները, կանգ առան իրենց

աեղում, հազիվ նկատվելով վերահաս ձթության
մեջ Յերբ մութը թանձրացավ, նրանք սողացին
դեպի տնակը, արդեն փակված և քնած:

Դուռը շարժվելով ինչ-վոր գործիքից, լուս
բացվեց, կարծես ինքնիրեն: Նրանք ներս մտան
առանց մի փոքրիկ աղմկի: Միքանի ըոպելից
նրանք նորից հայտնվեցին, իրենց ուսերի վրա
կրելով սպիտակ սավանի մեջ փաթաթված մի
բեռ:

Նրանք արագորեն ցածրացան զառիվայր
կածանով, զգուշորեն պահելով իրենց բնոր և
շարունակեցին ճանապարհն այնքան, մինչև վոր
հասան հեղեղատի լեզերքը:

Այստեղ, ծառերի մի խմբի լեռեռում, լեռե-
պում եր ինչ-վոր վրան, քամուց որորվող... բայց
վոչ, դա սալլակ եր: Զիերի սմբակները փաթաթ-
ված ելին խոտով, իսկ սալլակը չորս կողմից
պաշարված եր տնկված ճյուղերով, հավանաբար
նրա համար, վորպեսզի ցերեկով հազիվ նկատելի
լիներ շրջապատի կանաչների մեջ, իրենից մի
մացառ ձեւացնելով: Լապտերի լույսի տակ չորս
ձեռքեր արագորեն բաց արեցին հափշտակված
կապոցը:

Յերկու ստվերների միջև, վորոնք նստած
ելին ծալապատիկ, հայտնվեց մի քնած լեռելսա,
մոտավորապես լերկու տարեկան:

Դա Փան-Փանն եր: Նրանք տվել ելին նրանքնաբեր դեղ և յերեխան պինդ քնել եր: Նույն միջոցին այդ ստվերները հազցըին նրան չափաղանց խալտարղետ զգեստներ, վորը հանեցին ինչ-վոր լաթերի կապոցից: Գեղեցիկ զգեստները, այնքան նեղ և փոքր, իսկ և իսկ Փան-Փանի հագովն յեղան: Նավանաբար, այդ խալտարղետ զգեստներն սկզբում պատկանելիս ելին յեղել միմանկիկի, վորը վոչ վաղուց հեռացել եր այս աշխարհից դեպի այստեղ, ուր հարկավոր չե վոչ մի հագուստ:

Հետեւալ որը, հազիվ կեսորին, արթնացավ ծեր Պիերան, Փան-Փանի դատարկ մահճակալի կողըին. Նրա ծանր գլուխը բարձի վրա դարձավ ամեն կողմ, աչքերով վնասուելով թոռանը: Դժվարությամբ բաց անելով ծանրացած կոպերը, վորոնք կարծես դեղին թղթից սարքված լինելին, — նա նայեց դեպի դատարկ մահճակալը, վնասուելով բոլոր անկյուններում, բայց իզնւը. յերեխան անհետ չքացել եր:

Ինչպիսի աղմուկ, ինչպիսի աղաղակ, ինչպիսի սարսափ: Ամբողջ գլուղը վազեց նրա աղաղակին: Ինչպիսի հարցմունք, աղերսանք ուղղեց ծեր Պիերոն իր բոլոր դրացիներին: Փան-Փանի գլխարկը գտան հեղեղատի ափին, վորի խորքում վոչինչ չեր յերեսուն և միան ջրի բերած-

քարերն ելին աղմուկով գլորվում այստեղ։ Այսու
առեն ինչ դարձավ հասկանալի։ Ծերը չեր արթ-
նացել սովորականի պես վաղ, այլ քնիլ եր այդ
բոթաբեր որը, իսկ լերեխան վաղել եր դեպի
հեղեղատի ափը և...»

Դիակը չգտնվեց, այսպես վոր, նաև չթաղ-
վեց։ Ծերն իմացավ, վոր դրացիների վորոնում-
ներն իզուր ելին, չնայած այն բոլոր հուլսերին,
վոր նա դրել եր նրանց վրա։ ծեր պապը մոայ-
լորին հանգստացավ։ Նա դադարեց հառաջելուց
ու լալուց, ներս մտավ իր տունը, ձեռքերը դրեց
ծնկների վրա... վերջապես նա բոլորովին մե-
նակ մնաց այս աշխարհում...»

Թեոդորը, ջւաղացի պապը, վորը լերբեմն
լեղել եր (գա լեղել եր այնքան վաղուց)։ Պիերոյի
հորեղբոր տղան, լեկավ նրան մխիթարելու, ար-
տահայտելու իր վշտակցությունը, նստելու մի-
տսին։ Ալդ նպատակով նա նստում եր նրա կող
քին։ լսում եր, բաց չանելով բերանը, ծխելով
ծխամորճ ծխամորճի լետեկից։ Բայց Պիերոն ել
քիչ եր խոսում։ Նրան գուր եր գալիս թեոդորի
ընկերակցությունը և միայն նրա մոտ եր նա
սիրում հիշել ժան-ժանին և բոլոր մեռած հա-
րազատներին։ Դա սկսվել եր ժանից, Ալեքսան-
դրիանալից, Տիբոլից... նա կը կնում, նորից թվում
եր ալդ անունները, միշտ նույն կարգով, միալար,

ինչպես վողբալի լերդ։ Մի անգամ, լցնելով իր ծխամորճը, Թեոդորն ասաց. «Կարող ե պատահեր, վոր դու աչքով ես տվել ժանին և բռլոր լուրալիններիդ. հավանական ե, վոր քո աչքը չար ե»։

Դա Պիերովի համար լույսի ճառագալթի նմաներ։ Հազիվ արտասանվեցին այդ խոսքերը, Պիերոն մռայլ և հավատացած կերպով կրկնեց. «Իմ աչքը չար ե»։ Իսկ Թեոդորը, վոր լուել եր, խորասուզվելով իր ծխամորճը ծխելու մեջ, սկսեց մտածել այդ մասին ինքն իրեն, շշարունակելով խոսելը։ Այսու կասկած չմնաց և դա պարզեց ամեն ինչ. — Ժանի, Ալեքսանդրիանալի, Տիբոյի և բոլոր մյուսների, հատկապես Ժան-Ժանի մահը։

Ծեր Պիերոն ամփոփվեց ինքն իր մեջ, դադարեց վորեե տեղ դուրս գնալուց։ Շատերը պնդում ելին, վոր ծերը հալ ու մաշ կլինի միշտ այդպես մենակ մնալով, վոր նրան հարկավոր և իր կողքին ունենալ վորհե մեկին և չթադնվել մարդկանցից։

— Հարկավոր ե ավելի շատ լինել մարդկանց մեջ, Պիերո պապի, գնալ ալստեղ, այնտեղ, խռանել, ծիծաղել, գիշեր-ցերեկ մենակ չնստել, շինել մենակության մեջ, — ասում եր նրա դրացուհի Վիկտորինան։ Ծերը բացասաբար շարժեց գլուխը. «Իմ աչքը չար ե»։ — Չար աչք, — հարցըեց,

զրացուհին անհանգստությամբ, — այդ ճշմարին եւ
— Այո, — պատասխանեց ծերունին համոզված
և շռւու լեկավ:

— Դուք այդ բանը յերբեք չեք ասել, — կըմ-
կըմաց զրացուհին և շտապեց շուտով հեռանալ,
չնայելով ծերի վրա: Առաջ նա չեր հավատում
բոլոր այդ հիմարություններին, բայց յերբ մարդ
ծերանում ու հիմարանում ե, միշտ ոկսում ե
հավատալ հրաշքներին. սարսափելի յե ընսել
բախտը: Ծերն ավելի և ավելի խուսափում եր
մարդկանցից, բոլորովին թագնվում եր իր հին,
տիսուր տնակում և տարվում սգի ցնորքով:

Նա հաճախ փակում եր աչքերը, հուսալով
տեսնել իր փոքրիկ թոռանը, վորը կորավ այն
քան վողբերգորեն:

Նա այնքան հավատացած եր իր նայվածքի
վտանգավորությանը և այնքան վախենում եր
վորեւ մեկին աչքով տալուց, վոր ձեռքերով
ծածկում եր աչքերը, հենց վոր լսում եր ման-
կական քայլերի մոտենալն իր լուսամուտներին:
Մի անգամ, աթոռի վրա նկատելով փոքրիկ ժան-
ժանի խաղատիկնիկը, նա շտապեց իր դլուխը
գարձնել. վախենալով, վոր աչքով կտա նաև նրան:
Յերբ իմացան, թե ինչպեսի նախազգուշություն
ե նա ձեռք առնում, բոլորն սկսեցին ավելի շատ
վախենալ նրանից և զգուշությամբ խուսափում

ելին նրա լուսամուտների մոտով անցնելուց,
մանավանդ փոքրիկ լերեխաների հետ:

Ժան-Ժանի հետ կապված հուշերը շարունակ
հարթվում, առնհետանում ելին Պիերո պապի ծե-
րացած հիշողությունից: Մի գեղեցիկ որ, նրա
խելքին փչեց բոլորովին հեռանալ իր հայրենի
գյուղից, ինչքան կարելի լե հեռու: Նա վերցրեց
իր փողերը, փաթաթեց շորի մեջ և հեռացավ,
խաղաղ, առանց վորեե մեկի կողմից լետ պահ-
վելու, վորովհետև նրա զառամած տարիներին
վոչփոք չեր մտահոգվում նրանով. նա բոլորովին
ազատ եր և կարող եր անել ամեն ինչ, ինչ վոր
դիմին փչեր: Ծերն առաջ եր ընթանում մեծ ճա-
նապարհով, գյուղերով, մի տեղից մի ուրիշ տեղ,
աննպատակ, անվերջ, լերեխաներին նայելուց ի-
րեն արգելելով, աշխատելով միայն պահպանել
հիշողության մեջ իր սիրելի թոռնիկի կերպա-
րանքը:

Մի անգամ, լերեկոյան, զարտուղի ճանա-
պարհի վրա, վորը վերջանում եր գետով, նա
նկատեց մի տարորինակ ստվեր. մի սալակ,
շրջապատված ճուղերով, և ձի, հսկաչական սըմ-
բակներով: Հեռվից, սալակի շուրջը, ինչ-վոր
փոքրիկ՝ ցատկուտում եր... Դա լերեխա լեր,
փոքրիկ լերեխա, Ժան-Ժանի հասակին. այդ ժա-
մանակ Ժան-Ժանը ճիշտ ալղքան կլիներ: Յեկ

վորքան նման ելին բոլոր շարժուձևերը, սովորությունները։ Ծեր-Պիերովի սիրտը ճմլվեց, դողդողացին ձեռքերը և ակամալից արցունքներ յերեացին աչքերում։

Շուտով, շուտով պետք եւ շուռ գալ, հեռանալ այդ տեղից, աչքով չտալու համար այդ մանկիկին։ Յեզ ահա, պապիկն շտապում եւ հեռանալ, շուռ եւ գալիս, քայլում եւ հեռու, հեռու Յերեխան ուներ խղճուկ, տանջված կերպարանք և հսկայական կապոցը, վորը կըում եր նա, խանդարում ու ճնշում եր նրան։

Այդ ժամանակ յերեխան, վորը հառաչելով հաղիվ եր գնում կապոցի ծանրության տակ, դալիս եր ուղղակի ծերուկի դեմ։ Պիերոն շտապեց արագացնել քայլերը, վորպեսզի խուսափի հանդիպելուց, վախենալով մասել տղալին օիր շար հալացքով։ Բայց ծերացած վոտքերը վատ ելին յենթարկվում, և, մի քիչ անց, ծերն շտապեց մի կողմ քաշվել, հեռանալ ճանապարհից, կանգնել նրա յեղրին ինչպես մուրացկան և ամուր փակել աչքերը ձեռքերով։ Յերբ փոքրիկ տոտիկները բոլորովին մոտեցան, Պիերոն ավելի ամուր փակեց աչքերը և կռաջըն գլուխը, վորպեսզի իրոք, աչքով չտար անցնող փոքրիկ, սիրեկի ելակին։ Յեզ ալդպես կանգնած եր դժբախտ ծերը, ականջ դնելով սիրելի վոտնաձայներին և

հիշելով իր թոռանը, իր գանձին, չւենթադրելով,
վոր իր ժան. ժանն ե անցնում իր մոտից, գնում
ե և հավիտքան կանհետանա իր համար միայն
այն պատճառով, վոր անխմաստ նախապաշար-
մունքը և հիվանդադին յերեակալությունը խանդա-
րեցին նրան՝ նայելու յերեխային:

ԶԵ վոր այդ յերեխան ինքը ժան. ժանն եր:
Նրա բախտն անցավ իր մոտով և անհետա-
ցավ անվերադարձ:

Տղան յենթակա մնաց տանջանքների,
Նա ընկել եր շրջիկ կրկեսը, վորտեղ նրա-
վոսկորները ջարդոտում ելին և վարժեցնում վոչ
ավելի լավ, քան վորմե շան կամ ձիու:

ԿՈՒՐՏ ԿԼԵԲԵՐ
(ԳԵՐՄԱՆԻԱ)

ՎԵՊ ՄՅՈՒՍ ԻՌԱՆՆԱՅԻ ՄԱՍԻՆ

Այս թոռւցիկ հիշողությունները մյուս Իռաննայի մասին ունեն իրենց պատմությունը. — Ճիշտ է, վոչ այնքան նշանավոր:

Բայց յես, այնուամենայնիվ, կպատմեմ նրա մասին իմ վեպի սկզբում:

Ցեվ այսպես, մենք, — յես և իմ բարեկամ Յուստուսը, գնում ելինք «Իռաննայի փողոց»-ով և վիճում ելինք մեծ Իռաննայի մասին։ Վոչ նրա համար, վոր մենք գնում ելինք նրա անվան փողոցով, — վոչ, փողոցի անվան տախտակը մենք նկատեցինք բոլորովին պատահաբար և ավելի ուշ։ Բայց մենք, այնուամենայնիվ, ինչ վոր՝ հատկապես խոսում ելինք նրա մասին։ Յուստուսն ասաց.

— Այնպես, ինչպես մենք ունենք պատերազմի Իռաննա, այնպես ել մենք պետք եւ ունենալինք խաղաղության Իռաննա։ Ցեվ հատկապես ալժմ, յերբ մեր զինվորները պետք եւ գնան Մարտկու։

Մենք նրա հետ հանդիպեցինք հետեւալ որը:
Այդ հանդիպումը ևս պատահական եր: Յուս-
տուսի հետ գտնվելով Արևմտյան կայարանում,
ապա անցնելով մի շարք փողոցներ, մենք
անսպասելիորեն հայտնվեցինք մի փողոցում: Այն-
տեղ մութն եր, համարյա խորհրդավոր, և արագ
սահող մարդիկ ավելի ուժեղ կերպով ընդգծում
էին այդ խորհրդավորությունը: Ինչ փոք զորա-
մաս մեզ գրավեց իր լեռնից, շարք կանգնած
վոստիկանների կողքից, լեռեք չորս լեռկար փո-
ղոցներով, և հանկարծ մենք հայտնվեցինք մի մեծ
դահլիճում, խոսող, շարժուձևեր անող մարդկանց
ամենախորքում, կեպիով և կրծքերին կարմիր
մեխիկներ ունեցող մարդկանց և կանանց մոտ, վո-
րոնք լեռեխաններ ունելին զրկած: Խոկ բոլորից
բարձրում փողփողում ելին մի զյուժին հսկա-
յական զբոշներ, կարմիր, կապույտ և ալ. ասեղ-
նադործված: Յեզ մենք արդեն գիտեցանք, թե
վորտեղ ենք մենք, — Պարիզի պրոֆեսիոնալ Միու-
թյունների Հավաքուլթների տանը, — այնտեղ,
վորտեղ պարիզցիները կազմակերպում են իրենց
գիշերային միտինգները: Այն դահլիճում, վորտե-
զից նրանք իրենց կարմիր շնչով քաղաքի ար-
դանդին շունչ են տալիս կամ վիթխարի Պարի-
զին հարկադրում են խլթխլթալ, լեփ գալ, և
լցնում են նրան պայթուցիկ նյութերով: Մենք

Նրան այստեղ անմիջապես չնկատեցինք. — մյուս
իռաննապին: Այո, սկզբում մենք տեսնում ելինք
միայն մարդանց, մի ամբողջ ծով մարդկանց:
Բայց հետո մենք նկատեցինք մի փոքրիկ նու-
վաստու, վոր խոսում եր մի վոչ-մեծ տրիբու-
նից: Նրա ճառն ալրում եր, հափշտակում: Դա
ճառ եր պատերազմի դեմ:

— Մենք սոսկ նավատախներ ենք, — ասում
եր նա, — խեղճ նավաստիներ, բայց մենք կապի-
տալից բացի, ուրիշ թշնամի չունենք: Մեր ոփի-
ցերներից և կապիտաններից բացի, ուրիշ հա-
կառակորդ չունենք: Մեր դրոշակը նույնպես
կարմիր ե ինչպես և ձերը, և մենք սպասում
ենք այն որվան, լերբ դուք ալդ դրոշակը քա-
ղաքի արվարձաններից կտանեք դեպի Պարիզի
սիրաց: Այո, մենք սպասում ենք, Մենք, Միջերկ-
րական ծովի նավատորմիզի նավաստիներս:

Իռաննան գեռես չեր հայտնվում: Տրիբունի
վրա նավաստուն փոխարինեց մի լիքը, ծիր
պարոն: Նա նահնարարվեց իբրև պարլամենտի
անդամ: Ըստ լերեսուլթին, նա պըոֆեսիոնալ
միություններում վորեն գեր խաղում էր,
վորովինետև ներկաները ճանաչում ելին նրան: Նա
խոսեց ավելի կարճ, քան նավաստին և մեղմ:

— Ի՞նչ անել, — հարցրեց նա: — Պատերազմի
դեմ բարրիկադներ կառուցել, զինել մասսանե-

րին, չե՞ վոր ալդ բոլորն անհույս ցնորքներ են: Հեղափոխությունների ժամանակներն արդեն անցել են, — բացականչեց նա, վերջացնելով իր ճառը: — Քաղաքը պետք է նվաճել ուրիշ միջոցով: Խելքով! Դիտակցությամբ! Վոդով:


Բայց ահա հալտնվեց նա, իսաննան: Նա քսանցերեք-չորս տարեկան, ցածրահասակ կին եր: Լզար ձեռքեր, կարճ կտրված մազեր, գորշ լիրես, արտահայտիչ բերան բարակ շրթունքներով. նրանք այնքան գունատ ելին, վորքան և արտահայտիչ, նրանք այնքան բարի ելին, վորքան և խոցելու ընդունակ: Նա ուներ մայրական աչքեր, — աչքեր, ինչպիսիք պետք է ունենաա իսաննան. Նա խոսեց ավելի քիչ, քան ալդ ձեր մարդը: Բայց ավելի սուր և համոզիչ: Յուրաքանչուր խոսքը նետի լեր նման. Նա, գեռես շրթունքներից շթուած, արդեն սուր եր, իսկ լերը արդեն արտասանվում եր, դառնում եր ավելի վտանգավոր: Յեվ այսաեղ, ուր նա ընկնում եր, թողնում եր մղկացնող ցավ: Նրա խոսքերը համոզում ելին: Նրանք սրտերի մեջ հրդեհ ելին վառում: Բոլորը վոգեորությամբ վողջունեցին վոքրիկ կնոջը:

— Մենք պետք ե կըծքով դեմ կանգնենք պատերազմին: Կեներալների դեմ, թնդանոթների դեմ, զինվորների դեմ, ուազմանավերի դեմ:

Ամենուրեք—զորանոցների մոտ, փողոցներում,
կայարանում։ Նենց ալս գիշեր, վաղը, ամեն որ
մենք պետք ե մեր մարմիններով կանգնեցնենք
նրա սվինների շարժումը, թեև մենք կվերածվենք
անձեւ զանդվածի։

Յերբ նա վերջացրեց, նրան վողջունեցին
ավելի վոգեորված։ Մի քանիսը նույնիսկ բարձ-
րացրին նրան ուսերի վրա։ Բայց շատերը նրա
հետ չելին համաձայնվում։ Փոքրիկ բեմի վրա մի
անդամ ևս հայտնվեցին նավաստին, մի հաստ
լերկաթագործ, ինչպես նաև ծեր պարոնը։ Բայց
արդեն չափազանց ուշ եր։ Փոքրիկ կինը հաղթել
եր։ Այս, պատերազմը պետք ե ճգմել մինչև մեռ-
նելը, պետք ե խեղդել նրան։ Դրա համար շատ
բան չի պահանջվում—գուցե միայն արիություն։
Դիմավորը՝ չպետք ե սպասել։ Նա ճիշտ ե ասում։
Բոլորը կարող ե սկսվել հենց ալսոր գիշեր։ Յեվ,
իրոք, սկսվեց։ Բայց յես ուզում եմ պատմել
ամեն ինչի մասին հերթով։

Հետևյալ որը մենք ացելեցինք Պարիզի շու-
կան և ապա Մեն գետի լերկարությամբ առաջ
գնացինք գեպի Լիոնյան կայարանը։ Մենք ինչ
ելինք ուզում գտնել այնտեղ։ Մենք պարզապես
գնացինք այդտեղ առանց վորեե նպատակի։ Բուշ-
վարով անցնում ելին զինվորները։ առջեից՝ փոք-
րամարմին, հաստ, կոծքի վրա նշաններ կախած



ոֆիցերը, ապա՝ ուրախ նվագող նվագախումբը,
խոկ լետեկից՝ ռազմաճակատ մեկնողները։ Այս,
նրանք գնում ելին ռազմաճակատ, գնում ելին
հակած գլուխներով։ Նըանց կողքերով զնում ելին
կանալք ու մայրերը։ Վորքան նրանք մոտենում
ելին կալարանին, այնքան խիտ եր դառնում կա
նանց ամբոխը։ Ամբողջ խմբերով նրանք դուրս
ելին գալիս փողոցներից, մի քանիսը դրոշակ-
ներով, — վոչ կապույտ — սպիտակ — կարմիր, ինչ-
պիսիք կախվել ելին միքանի պատշգամբներից,
այլ սպիտակ և կարմիր։ Մեկի վրա նույնիսկ
նկար կար. — յերկու ուժեղ, բանվորական ձեռքեր
կոտրում ելին հրացանը։

Փոքրիկ ալիքների նման, նրանք միանում
ելին զինվորների յերթին։ Մոտենում ելին քայ-
լողներին, համոզում նրանց։

— Մնացեք տանը։ Ուր եք գնում։ Սպա-
նելու մարոկկոցիներին։ Ամաչեցեք։ — Կամ՝ յետ
տվեք հրացանները։ Փոշու մեջ տրորեցեք նրանց։
Կորչի սպանության գործիքը։

Յեվ ամենուրեք, վորտեղ ամբոխը խիտ եր,
և ամենուրեք, վորտեղ ավելի շատ ելին սպառ-
նում. յերիտասարդ զինվորներին, — մենք տեսնում
ելինք նրան, մեր իոաննալին։ Նա ալդ մանր
ալիքներին ուղղություն տվող ուժն եր, նա ար-
դեն գործադրում եր իր ծրագիրը։

Պատքարի վերջն այնպես խաղաղ չեղափ, ինչ-
պես սկիզբը Հանկարծ փողոցներով սլացան ձիա-
վոր ժանդարմները, նրանք գնացողներին կտրե-
ցին կանանցից, մղեցին նրանց յետ, խտացրին
հարևան փողոցներում, բայց հաղթվածներն, աշ-
նուամենախիվ, հաղթանակ տարան: Յերբ հաստ
ովիցերն սկսեց հաշվել իր զինվորներին, միքա-
նիուը պակասում ելին: Ճիշտ ասած, վոչ շատե-
րը: Գուցե՛ մոտավորապես մի դրուժին, բայց և
այնպես, չնայած խուզարկութիւններին, նրանց
դանել չկարողացան:

Մոտակա որերը յես գտնվում ելի Պարիզից
դուրս: Յուստուսն ուզում եր ինձ ցուց տալ
բանվորական կոմունան, և, այդպիսով, վորոշ ժա-
մանակ յես վոչինչ չլսեցի մեր իոաննալի մա-
սին: Նույնպես և չգիտեմ, այդ ժամանակ յե-
ղել ելին նոր կոխմեր, բայց յերբ յես նորից
վերագարձա, — այդ՝ մի ուրբաթ որ եր, վաղ ա-
ռավոտան, — յես անմիջապես ընկա կուվի ամե-
նայեսուն տեղը: Այս անդամ ուղարկում ելին
զինվորների մի մեծ ջոկատ, գուցե մի ամբողջ
բատալիոն: Նրանք գնում ելին արւոգ քայլերով,
հագանականորեն, հյուսիսային զորանոցներից և
ուղևորվում ելին դեպի Լիոնյան կայարանը: Ընդ-
հարումը վստիկանության հետ արդեն տեղի յեր
ունեցել: Համենայն դեպս, ամենուր յես տես-

նում ելի վազող կանանց, ձիավոր վոստիկանների և ժանդարմերի:

Այստեղ, վորտեղ բուլվարներից մեկը վերջանում է Հանրապետության հրապարակով, աեղի յեր ունեցել գլխավոր ընդհարումը:

Զինվորները, փոքրամարմին, հաստ գնդապետի գլխավորությամբ ուղում ելին ամբոխին յետ դարձնել, բայց չնայած նրան, վոր քսանհինդ վոստիկաններ մաքրել ելին ճանապարհը և շարունակում ելին մաքրելով առաջանալ,—հրապարակը լցվեց ժողովրդով։ Ուշերի նման, կանաք կանգնել ելին գնդապետի ձիու առջեր և նրանց ամբոխն ավելի ու ավելի խտանում եր։ Միաժամանակ նրանք նետվում ելին աջ և ձախ, կանգնեցնելով զինվորների առաջ շարժվելը, թափում ելին նրանց վրա թերթիկներ և փոքրիկ, կարմիր ծաղիկներ, համոզում ելին նրանց և փորձում ելին նրանց յետ մղել։ Զինվորները չելին ընդիմանում այդ ճնշումին։ Ավելին, — նրանք համարյա ուրախանում ելին անսպասելի ընդհարման համար։ Նրանք ևս կանանց ծաղիկներ ելին նետում։ Փորձում ելին նրանց հետ գըկախառնվել և շարքերն այդպիսով կազմալուծվեցին։ Այդ յեղավ գնդապետի և ժանդարմիների խորակումը։ Խմբերը մանրվեցին, խառնվեցին և շարժումը դեպի Լիոնյան կայարանը ընդհատվեց։

Յես չդիտեմ, թե ինչ պատահեց հետո և ինչով վերջացավ այդ պալքարը։ Յես միայն գիտեմ, վոր հանկարծակի, յես ու Յուստուսը սեղմբվեցինք, վոր մեր առջեից ու յետեից սլանում ելին ձիերը և մենք պետք ե թագնվելինք։ Բայց, թեև մենք, փախստականների նման, ամբողջ ուժով վազում ելինք լայն փողոցով, այնուամենալնիվ գիտակցում ելինք, վոր փոքրիկ իուաննան նոր հաղթանակ եր տարել։

Փախստի ժամանակ մենք իմացանք, վոր յերեկոյան քաղաքի արևմտյան մասում պետք ե տեղի ունենա խաղաղ ցուցի մասնակիցների ժողովը, իր տեսակի գլխավոր շտաբի նիստը, փոքրիկ իուաննալի նախագահությամբ։ Յուստուսն հո ստացավ անցագիր և իմացավ. աղդանշանը. և փորովհետեւ մենք համարում ելինք ցուցի մասնակիցներ, ուղեորվեցինք այստեղ։

Հավաքութը կայանալու յեր կանաչների մեջ թագնված մեծ զրուցարանում։ Իուաննան նստել եր սեղանի մոտ, իսկ նրա շուրջը քսան-յերեսուն մարդ։ Դրանք գլխավորապես տղամարդիկ ելին, համարյա բոլորը շրջակալքի արտադրական ձեռշնարկություններում աշխատողների կողմից լիազորված։ Բոլորը համաձայն ելին նրանում, վոր Պարիզի զորքերի ռազմաճակատ ուղարկելու դեմ պալքարը պետք ե սրացնել։ Այս, բայց ինչպես

Առաջին հերթին, թերթիկների և պրոպագանդալի ոժանդակությամբ՝ լուրաքանչլուր տան մեջ: Յուրաքանչյուր առավոտ: Յուրաքանչյուր լերեկո: Ամբողջ Պարիզը պետք է կանգնի միասնական մանիֆեստով, զինվորներին դուրս հանելու դեմ: Յեվ այդ բոլորը համարևա պատահաբար առվեցին փոքրիկ իոաննալի բերանով, ինչպես մի անդամ, մեծ իոաննալի բերանով ասվել ելին ռազմական ծրագրերն Անգլիալի դեմ: Փոքրիկ իոաննան խոսքերը դուրս եր ցալտեցնում իբրև հորդաբուխ ակունք, թեև խենթ վոգեորության վոչ մի նմուշ չկար: Յեվ ընդհանրապես, նրա ընթացքի մեջ մարտահրավեր վոչինչ չկար: Բնգհակառակը, նա խոնարհ եր և հեղարարու նա ուշադրությամբ լուսմ եր նրանց, վորոնք պատահանում ելին իր առաջարկներին:

Հետեւալ առավոտան Պարիզն ամբողջապես լցված եր խաղաղության այդ մանիֆեստով: Յես չդիմեմ, թե ինչպես եր այդ բանը հաջողվել իոաննալին և իր ոգնականներին: Բայց բոլոր փողոցների ճամբամեջերին, բոլոր հրապարակներում, ափիշաների բոլոր սլուների, պատերի և ցանկապատերի վրա, — ամենուր, վորտեղ կարելի յե վորեւե բան սոսնձել, — կացված ելին թերթիկները: Տարածել ելին նաև տներում, ներս ելին մտցրել դռների տակից, տարածել ելին բնակվող-

ների մեջ. թողել ելին նաև մեր փոքրիկ հլու-
րանոցում:

Դրանք բավական միաժիտ թերթիկներ ե-
լին. Ալսպես ասած, հասարակ մտածողության
արդյունք: Ժողովրդի բարբառով: Արվարձանների
լեզվով:

«Սպանություն ե՝ դուքս գալ մարոկկացի-
ների դեմ: Դա թալան ե աղքատ հովիմներից:
Զինվորներ, դուք հարստացնում եք կապիտա-
լիստների գրամարէղերը: Յուրաքանչյուր մարոկ-
կացի ունի կին և լեռեխաններ»:

Սրանք վերնագրերն ելին, և այն, ինչ վոր
կար նրանց տակը շատ քիչ բանով եր տարբեր-
վում նրանցից: Վերջում կար հրավեր ևս մի ցուլ-
ցի, վոր չպիտի նմանվեր վերջին ցուլցին: Հրա-
վիրում ելին ցուլցի՝ պատերազմի դեմ ընդհան-
րապես:

Այդ ընդհաննուր ցուլցը տեղի ունեցավ հենց
հետեւյալ որը: Կիրակի որը: Պետք ե հավաքվե-
լին Սենի ափին, մի փոքրիկ այգում. յեկան յեր-
կու-յերեք հաղար մարդ:

Մենք դուքս յեկանք մոտ կեսորին: Յեցի...
տասարդությունը գնում եր առջելց: Բայց մենք
շատ տեղ առաջ չգնացինք: Արդեն մոտակա փո-
ղոցներում, ամենուրեք կանգնել ելին վոստիկա-
նական շղթաները. և արդ շղթաներն ամբողջ ժա-

մանակ մեզ յետ ելին նետում գեղի փոքրիկ ալ-
գեղործական շենքը, ամեն կողմից կտրելով մեր
ձանապարհը, և վերջապես, մեզ վոչինչ չմնաց տ-
նել, քան ցրվելը:

Յերբ մենք ուղեորվեցինք տուն, մեզ հետ
միասին քայլում եր մի լղար յերկաթագործ: Մենք
նրա հետ խոսակցեցինք և վերջապես իմացանք,
ինչ վոր վաղուց ուղում ելինք իմանալ: Ո՞վ եր,
իսկապես, մեր փոքրիկ, քաջ իոաննան:

— Նա իրենից չի ներկայացնում վորեե հա-
տուկ բան, — ասաց յերկաթագործը: Կարունի յեւ
Ապրում եւ Լամարկի փողոցում, ունի յերկու ան-
չափահաս յերեխաներ: Նրանք վորբ են: Հալըն
սպանվել եւ տասնհինգ կամ տասնվեց թվին:

— Նա վորեե կուսակցության անդամ ե, —
հարցրեց Յուստուսը:

— Վոչ, — պատասխանեց յերկաթագործը: —
Բայց մենք բոլորս զիտենք, վոր նա զործնական
մարդ ե: Նա չի մոռանում վոչ մի ժողով, վոչ
մի գործագույ, վոչ մի կամպանիա: Նա ամենուր
ե, անա արդեն լոթը տարի, և մենք նրան ան-
վանում ենք վոչ այլ կերպ, քան «կրակ»:

Հետո, վորոշ ժամանակ, յես վոչինչ չլսեցի
փոքրիկ իոաննալի մասին: Մոտավորապես տասը
որ: Բայց այդ ժամանակամիջոցին նա, ըստ յե-
րկութին, անգործ չեր: Այդ ապացուցեցին տե-

դի ունեցող անցքերը։ Յերբ յես նորից տեսա
նրան, — այդ մի տաք, հուլիսան լերեկո յեր, —
նա կանգնած եր մի փոքրիկ բանակի դուռից։
Նրան հարողների քանակը մեծացել եր տասն
անգամ։ Յես նրանց տեսա նորից ցուցի ժամա-
նակ, այս անգամ ավելի հաջող։ Նրանք շարժ-
վում ելին հարավային թաղամասերից։

Յես ուզում եմ նկարագրել այդ յերթը։ Առ-
ջեկա գնում եր ջահելների խումբը։ Նրանց բո-
լորի կրծքերի վրա կային մեծ կարվածքներ՝ «Կոր-
չի պատերազմը, կորչի բռնությունը, կեցցե խա-
ղաղությունը, կեցցե ժողովուրդների յեղբայրու-
թյունը» մակագրություններով։ Կային նաև ա-
վելի սուր մակագրություններ։ «Յեթե դուք այ-
սունետե նույնպես կշարունակեք պատերազմը,
մենք կապստամբվենք։ յեթե դուք այսունետե շա-
րունակեք սպանել մարդկանց, մենք ել ձեզ կսպա-
նենք. պատերազմներին հաջորդում են հեղափո-
խությունները»։

Յերիտասարդների յետեկա գնում ելին կա-
նացք։ Գնում ելին նրանք խմբերով։ Հավանա-
բար, ըստ քաղաքամասերի։ Համենայն գեպս,
նրանք կրում ելին մեծ կտորներ, համարներով.
իսկ այդ կտորների միջև կային ուրիշները՝ լո-
ղունգներով։ Մարտական կոչերով՝ պատերազմի
դեմ. և տեղ-տեղ կային նաև դրոշակներ։

Կանանց յետեկից գնում ելին տղամարդիկ:
Կտորներ քիչ կային: Բայց շատ կային դրոշակ-
ներ: Դրանք քաղաքամասերի և պրոֆեսիոնալ
միությունների դրոշակներն ելին: Հրաշալի դրո-
շակներ: Հին դրոշակներ: Դրոշակներ, վորոնք
հավանորեն անցել եցին այդ փողոցներով քառա-
սունութ և լոթանասունմեկ թվուկաններին: Այդ-
տեղ կային նաև արվարձանների դրոշակները, և
նրանցով յես խմացա, վոր փոքրիկ հոաննայի իշ-
խանությունը տարածվում եր արդեն մինչև Վեր-
սալ: Դեռ ավելին:

Յեզ ելի մի բան ինձ համար նկատելի յե-
ղագ: Այդ այն եր, վոր արդեն հանդիսատեսների
մի մասն ևս գտնվում եր փոքրիկ հոաննայի ազ-
գեցության տակ: Մերթ այստեղ, մերթ այստեղ
նրանք ձախնակցում եցին ցուցարարներին, վժդ-
ջունում ելին նրանց դրոշակներն ու կտորները,
իոկ վերին հարկերի լուսամուտներից նույնիսկ
ծաղիկներ ելին նետում:

Յես պետք ե նաև պատմեմ այն մասին,
վոր մենք, Յուստուսն ու յես, նաև միքանի տղա-
մարդիկ, միացանք յերթին: Այն մասին, վոր մենք
նրանց հետ միասին գնացինք և յերթը համար յա
հասավիս: Ժերմենի բուլլվարին: Բայց մինչև բուլ-
լվարը միքիչ մնացած, առջևից գնացողները շըր-
ջապատվեցին ամեն կողմից և սեղմվեցին: Հետե-

վլալ որը լես լսեցի, վոր միքանի ցուցարաբներ
յնկել են ծիերի տակ և վոր մեկն սպանվել ե,
իսկ տասը, թե տասնմեկը վիրավորվել են:

Այժմ յես արդեն չեմ հիշում, թե ինչքան
որեր են անցել այն ժամանակից, յերբ յես հին-
գերորդ և վերջին անգամ տեսա փոքրիկ իռան-
նալին:

Յուսումն ինձ պատմում եր, վոր նա շա-
րունակում ե իր ցուցերը և հանդիպումները
զինվորների հետ, վոր նա թերթիկներից անցել
ե հակամիլիտարիստական լրագրի, վոր այդ լրա-
գիրը տարածվում ե զինվորների մեջ և վոր նրա
ազգեցությունն ու շարժումը՝ ընդդեմ Մարտկուի
պատերազմի և ընդհանրապես ընդդեմ պատե-
րազմի, մուտք ե գործել նավատորմիղը, ուազմա-
ճակատը, Մարտկուն, ինչպես նաև Սիրիայի ուազ-
մաճակատը: Իհարկե, այդ բոլորն անողը միայն
նա չեր: Նա նույնիսկ միքիչ շարժվել եր դեպի
հետին պլան, նրա տեղն հիմի կային պրոֆեսիո-
նալ միությունների ղեկավարները, կուսակցա-
կան ինստանցիաները: Բայց նա դեռ ևս ամբողջ
շարժման հոգին եր, բարի հանճարը, և թվում
եր, վոր նա այդպես ել կմնա դեռ յերկար տա-
րիներ:

Իմ հինգերորդ հանդիպումը զուգադիպեց յեր-
րորդ անգամ՝ ընըհանուր ցուցի հետ: Վերջին

ցուցը քաղաքի արգանդում՝ պետք ե կը կնվիր։
Յես պետք ե ավելացնեմ, վոր փոքրիկ իռան-
նան և մյուսները վերջին շաբաթներում շատ
բան ելին սովորել։ Յեթե առաջին ցուցերի ժա-
մանակ հրավիրում ելին բացարձակորեն, ապա
վերջինները լինում ելին ամբողջովին զաղանի և
անսպասելի։ Հեղեղի նման, յերթը խուժում եր
քաղաք. իսկական ջրհեղեղ։ Այս անդամ ես, ցուց-
ը պետք ե լիներ ավելի վիթխարի, հարվածե-
լով քաղաքի ուղղակի կենտրոնին։

Ամենից առաջ ուշագրություն ելին դար-
ձրել նրա վրա, վոր ցուցարարները մի տեղում
չհավաքվեն։ Նրանք գտնվում ելին Մոնմարտրի
լեռնում, իտալական հրապարակի վրա, ուրիշ
շատ տեղերում։ Ամեն կողմերից նրանք շարժվե-
ցին քաղաքի վրա—հարավից, հյուսիսից, հյու-
սիս արևելքից և ամեն տեղից եր, ամբողջ խըմ-
բերով, հազարներով, աամնյակ հազարներով, վո-
րովինետե փոքրիկ բանակից մի ամսվա ընթաց-
քում կազմվել եր մի ամբողջ զորաբանակ։

Վոստիկանությունը, վոր շարժվում եր ա-
ռաջի խմբի գեմ, վորը գալիս եր հյուսիսից, հան-
կարծ տեսավ, վոր արևելքում և արևմուտքում.
Նրան անցան, վոր հյուսիսալին ցըված շարքերի-
փոխարեն բարձրացան միքանի ալղպիսիները,
վոր բացի դրանից, հասան հարավալին խմբերը,

և նախքան վոստիկանությունը զլուխ կհաներ այդ խառնաշփոթությունից, ամբոխի առաջխաղցումն արդեն հասան Տյուլերի այգուն, նրա լետեկից գնացին արևելյան և արևմտյան խմբերը, և վերջում հասան հյուսիսային խմբերը:

Դա մի վիթխարի ամբոխ եր: Յեվ յուրաքանչյուր լոպե դառնում եր ավելի մեծ: Միանում ելին զբոսնողները, տուրիստները, ինչպես նաև նրանք, ովքեր սկզբում վախեցել ելին: Լրագրերի կարծիքով լեղել ելին հարյուր հազարից ավելի:

Ամենամեծ չափով կիտվել ելին նարնջանոցի մոտ: Այստեղ պետք է արտասանվելին ճառեր. առանձին հոետորներն արդեն կանգնել ելին վերեւում և բոլորից վեր կանգնել եր մեր քաջիուաննան:

Յես տեսա նրան բավական վորոշակի: Նա նկատելիորեն լղարել եր, լղարել ելին նաև նրա ձեռները: Բայց նա դեռևս նույն քաջ իուաննան եր և գժգունությունը չեր հանգցը ել նրա դեմքի կրակը: Այս, կրակը վառվում եր ավելի պայծառ, քան այն լերեկո, հավաքատեղիում: Նա վերածվել եր չահի: Նա իրոք վոր, լղար լերկաթագործի ասածի նման, կրակ եր:

Հազարավոր ձախեր բղավում ելին. «Կորչի

պատերազմը։ Այնքան ուժեղ, վորքան չելին
բղավել յերբես։ Մենք բղավում ելինք կրկին և
կրկին և յուրաքանչյուր անդամին ավելի և ա-
վելի ուժեղ։ Վոստիկանությունը հարգանքով եր
վերաբերվում այդքան անթիվ քանակությամբ
մարդկանց։ Նրանք չափաղանց շատ ելին ձիե-
րով ու գնդացիրներով ցրելու համար։ Վոստի-
կանությունն արգեն տեսնում եր, վոր վողոց ե-
դուրս յեկել արգեն վոչ թե պատերազմի դեմ
կռվող աղանդը, և վոչ ել ինչ վոր դժբախտ հար-
ցուրյակ կամ հազարյակ, վորին կարելի յե ցրել։—
այդ արգեն ծով եր, այդ համարյա թե ամբողջ
քաղաքի կեսն եր։ Յեվ այդ մասսացին հաշվի ե-
ցն առնում, այդ մասսայի դեմ նահանջում ե-
ցն, — համենայն դեպո՝ Պարիզի վոստիկանները։

Յուցարարների այդ վերադարձի մասին յես
կհիշեմ հավիտյան։

Փողոցները լցվեցին կարմիր դրոշակավոր,
յերգող խմբերը։ Վերջիվերջո մենք չիմացանք
ուր գնալ մեր խնդության հետ և յուրաքանչյուրս
քայում ելինք յերջանկությունից մեզ մոռացած։


Այս վերջաբանով, ճիշտն ասած, յես կարող
ելի վերջացնել իմ պատմությունը մյուս իռան-
նալի մասին, վորովհետեւ այդ մեծ ցուցից յերեք
որ հետո յես թողեցի Պարիզը։ Բայց յես, այ-
նուամենայնիվ, դեռ պետք ե տեղեկացնեմ, վոր

այսոր փոքրիկ իուննան արդեն մեռած եւ և վոր
նրա ընկերները՝ տասնութերորդ և տասնիննե-
րորդ թաղամասերից, միքանի շաբաթ սրանից ա-
ռաջ նրան թաղել են։ Այս, ինչ վոր յես իմացա
արդ մահվան մասին, իմացա Յուստուսից։ Յուս-
տուսը ներկա յեւ յեղել դրան։

Ահա նա ինչ եւ գրել ինձ։

«Նա ընկավ ճակատ մեկնող թնդանոթաձիգ-
ների հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ։
Մենք յենթագրում ելինք, վոր մենք արդեն հաղ-
թանակել ենք։ Բայց ոֆիցերներից մեկը հրա-
հանգեց։ — գալուպ։ Յեվ կոպիտ, գյուղական ջա-
հեներն արշավեցին ուղղակի մեր վրա։ Բայց՝
շարունակում եւ Յուստուսը, — նա իզուր չընկավ։
Մեր բոլոր արվարձանները, շնորհիվ նրա մահ-
վան, դարձան միասնական, յեռուն ծով և այն-
տեղ, ուր միքանի որ առաջ նա մենակ եր, հան-
կարծ հայտնվեցին հազար նոր իուննաներ։

«Յեվ միթե դա գեղեցիկ մահ չե, — գրում
եր նա։ — Մեծ իուննայի պատվին կառուցել են
յեկեղեցիներ և բարձրացրել հուշարձաններ, մե-
ծարել են նրան և նույնիսկ հայտարարել սուրբ,
բայց մեր իուննան վերածնվեց հենց նույն որը»։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b2

1. Հ. Բարեխուս. — Զար աչքը (Փրանսիական
գրականություն) 3
 2. Կ. Կլերեր. — Վեպ մյուս իոննալի մասին
(գերմանական գրականություն) 13
-

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0045258

(124)

A 7
8280

Р А С С К А З Ы

Часть II.



Февр. 12 1919.